Հովհաննես Թումանյան

Արտուտի երգը

(Ժողովրդական ավանդության)

Մի մարդ տեսավ գարնան մարգում
Վեր ճախրելով,
Ճրովողելով,
Ոնց էր արտուտն անուշ երգում:

«Սա որ, ասավ, էս վայրի տեղ
Երգ է ասում էսքան շքեղ,
Հապա թե մեր տանը լինի
Ի՜նչ դրախտի ձայն կըհանի»:
Ու ներշընչման տենդի միջին

Բռնեց մարգի սիրուն երգչին,
Տարավ փակեց նեղ վանդակում.
Տեսեք, հիմի ոնց է երգում:
Բայց ի՜նչ. գերի, վանդակի մեջ.
Թըռչնակը լուռ նայում էր խեղճ

Հեռո՛ւ–հեռո՛ւ ճոխ մարգերին.
Միտն էր բերում կյանքը նախկին,
Երբ որ ազատ,
Էն ցողապատ

Թարմ արոտում,

Թավիշ խոտում
Ման էր գալի,
Սորոլ տալի...
Միտն էր բերում,
Տըխրո՛ւմ, տըխրո՛ւմ,

Ու հառաչում,
Ցավոտ ճըչում
Մաշող կարոտն ազատության.
«Վա՛յ, վաթա՛ն... վա՛յ, վաթա՛ն»:
Գուցե սրա կուտն է աղքատ

Կամ թե փայտե վանդակն է վատ,
Որ իր զըվարթ երգը թողեց:
Միտք արավ տերն ու ողջ փոխեց.
Փայտե կոպիտ հին բանտի տեղ
Ոսկի վանդակ շինեց շըքեղ

Ու կերակուրն, էն օրից վեր,
Արավ շաքար ու թանկ մըրգեր:
Սակայն մարգի քընքուշ գերին
Մըտիկ չարավ թանկ մըրգերին:
Ոսկի բանտից՝ նեղ ու խավար,

Սըլանում էր միտքն անդադար
Դեպ վե՛ր, դեպ վե՛ր...
Ու հիշում էր,
Թե մայիսի
Արշալույսի

Ջինջ երկընքում
Ո՞նց էր երգում,

Խորո՛ւնկ, անվե՛րջ,
Լույս ծովի մեջ
Անփույթ լողում,

Խընդում, խաղում...
Միտն էր բերում,
Տըխրո՛ւմ, տըխրո՛ւմ,
Ու էն կյանքի հուր կարոտով,
Նեղ վանդակում, կոտրած սըրտով

Հընչում էր ողբն իր գերության.
«Վա՛յ, վաթա՛ն... վա՛յ, վաթա՛ն...»
Ո՞րն է սրա լավ վաթանը,
Որ չի կենում իր ճոխ տանը,
Ո՛չ մի ուրախ երգ է երգում

Էս ոսկեղեն թանկ վանդակում:
Ասավ տերը ու ետ տարավ՝
Թողեց հանդում: Գերին թըռավ,
Կարոտալի մըտավ էն պերճ
Ծաղիկների, խոտերի մեջ:

Ապա վերև,
Դեպի արև
Ճախրեց, խընդաց.
Օդում թընդաց,
Հոսեց երգը... Սակայն նորեն

Էլ առաջվա երգը չէր էն...

Ու էն օրից
Ջինջ այերից
Ջիլ, թրթռուն
Ինչ էլ երգի,

Արև, գարուն,
Բույրը մարգի,
Ներրա զրվարթ, հընչուն երգում
Դեռ լալիս է ու հեկեկում
Հիշատակը իր գերության

«Վա՛յ, վաթա՛ն... վա՛յ, վաթա՛ն...»

1908